ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N1762 - Ա **31 մարտի 2009թ.**

ՋԱՄԲՈՒԼԻ ՓՈՂՈՑԻ Հ. 21 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐԱՄ ԱՐԿԱԴԻԱՅԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ, ԱՐԱՅԻԿ ԱՐԿԱԴԻԱՅԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ, ՌԻՄԱ ՆԵՐՍԵՍԻ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է Հանդիսացել Արամ Արկադիայի Կիրակոսյանի (ծնված 11.11.1962թ.), Արայիկ Արկադիայի Կիրակոսյանի (ծնված 24.02.1966թ.), Ռիմա Ներսեսի Մնացականյանի (ծնված 05.04.1941թ.) դիմումը: Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Ջամբուլի փողոցի հ. 21 հասցեում ընդհանուր հողամասի մակերեսը փաստացի կազմում է 551.77քմ, որից 444քմ մակերեսով հողամասն Արամ Արկադիայի Կիրակոսյանին, Արաիկ Արկադիայի Կիրակոսյանին, Ռիմա Ներսեսի Մնացականյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասն է: Օրինական հողամասին կից օգտագործվող 107.77քմ մակերեսով հողամասը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 2001 թվականը, 16.10.2006թ. ժառանգության իրավունքի վկայագիրը, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Շենգավիթ տարածքային ստորաբաժանման 30.01.2008թ. հ. 166, Երևանի քաղաքապետարանի «Հողի և ունեցվածքի գործառնություններ» ՊՓԲԸ-ի 10.02.2009թ. հ. 20/2-Ե/51 գրությունները, Երևանի քաղաքապետարանի «Քաղաքաշինություն» ՊՓԲԸ-ի 29.01.2009թ. հ. 20-Ել-493 եզրակացությունը, համաձայն որի Ջամբուլի փողոցի հ.21 բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով «Երևան քաղաքում իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» հ. 2387-Ն որոշմամբ.

1. Վերականգնել Ջամբուլի փողոցի հ. 21 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Արամ Արկադիայի Կիրակոսյանի, Արաիկ Արկադիայի Կիրակոսյանի, Ռիմա Ներսեսի Մնացականյանի հողօգտագործման իրավունքը բնակելի տան և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 444քմ մակերեսով հողամասին կից 107.77քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 107.77քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ:

2. Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Շենգավիթ տարածքային ստորաբաժանման կողմից:

3. Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրված միասնական գլխավոր հատակագծով:

4. Ջամբուլի փողոցի հ. 21 հասցեի բնակելի տանը տրամադրել հասցե՝ «Ջամբուլի փողոցի հ. 21 տուն»:

5. Առաջարկել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Շենգավիթ տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ Արամ Արկադիայի Կիրակոսյանի, Արաիկ Արկադիայի Կիրակոսյանի, Ռիմա Ներսեսի Մնացականյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ լուծելով գույքագրման արդյունքում հաշվառված անշարժ գույքի խնդիրները:

6. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության պետին՝ սույն որոշման օրինակները 5-օրյա ժամկետում առաքել Մալաթիա-Սեբաստիա թաղապետարան:

7. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

8. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա. Սարգսյանի վրա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ